ԵԱՀԿ ԺՀՄԻԳ նախնական զեկույցների նախաբանների համեմատական

ԱԺ ընտրություններ, ապրիլի 2, 2017թ.	ԱԺ արտահերթ ընտրություններ, դեկտեմբերի 9, 2018թ.	ԱԺ արտահերթ ընտրություններ, հունիսի 20, 2021թ	**Արդյունքում՝** (2021թ. ընտրությունների համեմատությունը նախորդ տարիների հետ)
Ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունները լավ էին կազմակերպված և հիմնարար ազատությունները ընդհանուր առմամբ պահպանվել էին: Ընտրությունները ստվերվեցին ընտրակաշառքների և քաղծառայողների և մասնավոր ընկերությունների աշխատողների վրա ճնշումների մասին արժանահավատ տեղեկություններով:	**Դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը:** Քաղաքական բաց բանավեճը, այդ թվում՝ ԶԼՄ-ներում, նպաստել է աշխույժ քարոզարշավի անցկացմանը՝ չնայած առցանց սադրիչ հռետորաբանության դեպքերը մտահոգության տեղիք են տվել: Կանխամտածված ընտրախախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքի և ընտրողների վրա ճնշումների ընդհանուր բացակայությունը իրական մրցակցության հնարավորություն է ընձեռել:	**2021 թ. հունիսի 20-ին ՀՀ-ում կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով կարճ ժամանակահատվածում: Այնուհանդերձ, դրանք բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և առանցքային մասնակիցների աճող սադրիչ հռետորաբանությամբ:**	***Դրական կողմեր՝*** Եզրակացության ներածական մասում անդրադարձ չի կատարվում ընտրախախտումներին և ընտրակաշառքի դեպքերին: ***Թերացումներ՝*** Նշվում է սուր բևեռվածությունն ու սադրիչ հռետորաբանությունը, քարոզչության բացասական տոնայնությունը: Իրավական դաշտի փոփոխությունը ընտրություններից անմիջապես առաջ դիտվում է որպես անորոշություն ստեղծած հանգամանք: Բոլոր զեկույցներում ընդգծվում է կանանց պասիվությունը քարոզարշավի ժամանակ: Այս անգամ նշվում է նաև կանանց և ազգային փոքրամասնություններին վերաբերող ուղերձների բացակայությունը:

	Քարոզարշավի ֆինանսավորման ամբողջականությունը խաթարվել է կարգավորման, հաշվետվողականության և թափանցիկության պակասի պատճառով:	Օրենքը նախատեսում է քարոզարշավի ֆինանսավորում մասնավոր և հանրային աղբյուրներից: Օրենքը սահմանում է մուծումների ու ծախսերի առավելագույն չափերը: Թեև կանոնները մշակված են մանրամասնորեն, մի շարք թերություններ թույլ են տալիս շրջանցել իրավական դրույթները:… ՎՎԾ-ն հրապարակել է համառոտ տվյալներ մրցակցակիցների մուծումների և ծախսերի չափի մասին և առցանց հրապարակել նրանց նախընտրական ֆինանսական հաշվետվությունները, ինչը նպաստել է ֆինանսական թափանցիկությանը:	
Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) պահպանել է բոլոր իրավական վերջնաժամկետները և իր գործունեությունը իրականացրել է թափանցիկ՝ գործելով կոլեգիալության սկզբունքով և արդյունավետորեն:	Չնայած կարճ ժամկետների՝ ընտրությունները լավ էին կազմակերպված:	Ընտրությունները կազմակերպող և անցկացնող մարմինն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ և մասնագիտորեն և վայելել է ընտրական շահառուների վստահությունը:	

Ընդհանուր առմամբ ընտրության օրը հանգիստ էր և խաղաղ, սակայն արձանագրվեցին կազմակերպչական խնդիրներ և գործընթացին անհարկի միջամտություններ, հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից:	Ընտրությունների օրն ընթացել է հանգիստ և խաղաղ, որի բոլոր փուլերը դրական են գնահատվել ԸՄԴԱ գրեթե բոլոր դիտորդների կողմից, ովքեր նաև նշել են ընթացակարգերի հետ ընդհանուր համապատասխանության մասին:	Ընտրությունների օրը, ներառյալ ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ դրական են գնահատվել: Քվեարկության օրը՝ ներառյալ ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ գնահատվել է դրական:	
Ընտրությունները կարգավորող իրավական դաշտը համապարփակ է, բայց խրթին: Նոր Ընտրական օրենսգիրքն ընդունվել է ընտրություններից ավելի քիչ քան մեկ տարի առաջ իրականացված բարեփոխման գործընթացի արդյունքում		Իրավական դաշտն, ընդհանուր առմամբ, համապարփակ է, սակայն այն փաստը, որ փոփոխություններն ընդունվել են ընտրությունների անցկացման ժամկետին այդքան մոտ ժամանակահատվածում, որոշակի իրավական անորոշություն է առաջացրել:	
Քարոզարշավների մեծ մասն իրականացվում էր թեկնածուների, այլ ոչ թե կուսակցության ծրագրերի կամ քաղաքականությունների շուրջ: Մասնակիցները հիմնականում կարող էին անցկացնել քարոզարշավ՝ առանց որևէ սահմանափակման, սակայն հանրապետության որոշ վայրերից հաղորդումներ ստացվեցին բռնության առանձին դեպքերի մասին: Դրական էր այն հանգամանքը, որ	Մրցակիցները կարողացել են ազատորեն իրականացնել իրենց քարոզարշավները. քարոզարշավի ընթացքում լիովին պահպանվել են միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների, արտահայտվելու և տեղաշարժի հիմնարար ազատությունները: Պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածը եղել է շատ կարճ, սակայն	Ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, և հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ընդհանուր առմամբ, հարգվել են: Մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Այնուհանդերձ, քարոզչության բացասական տոնայնությունը և անձնավորվածությունը խոչընդոտել են քաղաքականության շուրջ	

պետական շատ պաշտոնյաներ արձակուրդ վերցրեցին քարոզարշավին մասնակցելու համար: Առկա են հավաստի տեղեկություններ որոշ կուսակցությունների կողմից ընտրակաշառքի բաժանման և հօգուտ իրենց քվեարկելու համար պետական ծառայողների, այդ թվում՝ բժշկական հաստատությունների և դպրոցների աշխատակցիների վրա ճնշումներ գործադրելու ու ահաբեկելու մասին, ինչը նպաստեց ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության ընդհանուր պակասը: Խոսքի ազատությունը երաշխավորված է Սահմանադրությամբ և կիրառվում է լայնորեն: Սակայն հեռարձակվող լրատվամիջոցների ազատությունը սահմանափակված էր դրանց սեփականատերերի կողմից խմբագրական անկախությանը միջամտելու միջոցով: Դա հանգեցրեց լրագրողների ինքնագրաքննության և կառավարությանը քննադատող հաղորդումների ապաքաջալերմանը, ներառյալ հանրային	քարոզչությունը սկսել է ավելի վաղ՝ ինչն արգելված չէ օրենքով: ԸՄԴԱ շատ զրուցակիցներ մատնանշել են իշխանությունների, մրցակիցների և հենց ընտրողների մոտ առկա քաղաքական կամքը՝ թույլ չտալու ձայների առք ու վաճառքի կիրառում: Դրական է այն, որ ընտրական շահառուների կողմից չեն եղել հաղորդումներ ընտրակաշառքի և ընտրական այլ խախտումների համակարգային փորձերի մասին: Լրատվական դաշտը բազմազան է, և Սահմանադրությամբ երաշխավորված արտահայտման ազատությունը պահպանվել է: ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից կատարված լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց տվեց, որ հեռարձակողները զգալի ջանքեր են գործադրել ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին և դաշինքներին լուսաբանելու համար՝ նպաստելով	կենտրոնացված քննարկումների անցկացմանը: Սահմանադրությամբ երաշխավորվող խոսքի ազատությունը պահպանվել է: Մեդիա միջավայրը բազմազան է, թեև շատ հեռարձակողներ ունեն վառ արտահայտված քաղաքական պատկանելիություն: Հեռուստատեսությունը քաղաքական տեղեկատվության առաջնային աղբյուրն է, շատ կարևոր է նաև սոցիալական ցանցերի դերը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից իրականացվող լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց է տվել, որ խոշոր	

հեռուստատեսությամբ: Լրագրողները նշեցին, որ բռնության վերջին դեպքերը և մեղավորներին պատասխանատվության չենթարկելը խոչընդոտում են լրագրողների աշխատանքը և հարցականի տակ դնում նրանց անվտանգությունը: Համացանցային ազատության հարցում միջամտություն առկա չէ, և տեղեկատվական առցանց աղբյուրները նպաստում են քաղաքական բազմակարծության ընդլայնմանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց տվեց, որ քարոզարշավի ժամանակահատվածում Հ1 հանրային ալիքը իր լուրերի թողարկումներում հավասար է լուսաբանել բոլոր մասնակիցներին:	տեղեկացված ընտրության կատարման համար ընտրողներին հասանելի տեղեկատվության բազմազանությանը: Մասնավոր շատ լրատվամիջոցներ թվում են քաղաքական կուսակցությունների հետ խիստ փոխկապակցված, և դրանցից որոշները ակներև նախապատվություն են դրսևորում: Հանրային հեռուստաընկերությունն ապահովել է ողջամտորեն հավասարակշռված լուսաբանում: Դրական է այն փաստը, որ մի շարք լրատվամիջոցներ, այդ թվում՝ հանրային հեռուստաընկերությունը, կազմակերպել են իրական բանավեճեր՝ ներառելով բոլոր մրցակից ուժերի թեկնածուներին:	հեռարձակողները նկատելի ջանքեր են գործադրել ընտրություններին մասնակցող մրցակիցների լայն շրջանակ լուսաբանելու ուղղությամբ՝ նպաստելով ընրողներին իրազեկված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը: Հանրային հեռուստաընկերությունը մրցակիցների համար ապահովել է հիմնականում հավասարակշռված լուսաբանում, այնուամենայնիվ ալիքը վարկաբեկիչ խոսքի պատճառով խմբագրել է մի ընդդիմադիր կուսակցության գովազդային հոլովակը: Որոշ նորաստեղծ կուսակցություններ մատնանշել են ավանդական ԶԼՄ-ների կողմից ոչ բավարար լուսաբանումը և փոխարենը օգտագործել են սոցիալական ցանցերը: Մի քանի լրատվամիջոցներ կազմակերպել են բանավեճեր, ներառյալ հանրային հեռուստաընկերությունը: Այնուհանդերձ մրցակցող կուսակցությունների և դաշինքների ղեկավարների կեսից ավելին հրաժարվել են մասնակցել հանրային հեռուստատեսության կողմից կազմակերպված երկու ամփոփիչ, որը բացասական է անդրադարձել վերջիններիս տեղեկատվական արդյունավետության վրա:	